

«Գիտական տեղեկագրի» խմբագրությունը հայտնում է իր երախտագիտությունը Հ.Ս.Քոթանջյանին սույն տեղեկագրում Ջորջ Մարշալի անվան անվտանգության հետազոտությունների ամերիկա-գերմանական կենտրոնի շրջանավարտների հայկական համաժողովին իր՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներին Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ արված առաջարկությունների մասին զեկույցը հրապարակելու համար:

ՀՏԴ 94/327(479.243)

Քաղաքագիտություն

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՄԻՆՍԿԱՆ ԽՄԲԻՆ ՈՒ ՄԱԿ-ԻՆ՝ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՍՊՄԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Հայկ ԲՈԹԱՆԺՅԱՆ

Հիմնաբաներ՝ Ղարաբաղյան հակամարտություն, ԵԱՀԿ Մինսկի խումբ, տիեզերական տարածություն, ուղեծրային հեռադիտարկման միջոցներ, խորագննում, Տիեզերքի ուսումնասիրման իրավական նորմերի հոչակագիր, քաղաքական-դիվանագիտական զսպում

Ключевые слова. Карабахский конфликт, Минская группа ОБСЕ, околоземное пространство, орбитальные средства, дистанционный зондаж, космическое право, политико-дипломатическое сдерживание.

Keywords: Karabakh conflict, OSCE Minsk Group, outer space, orbital facilities, remote sensing, the International Space Law, political-diplomatic containment

НОВЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ СОПРЕДСЕДАТЕЛЯМ МИНСКОЙ ГРУППЫ И ООН ОТНОСИТЕЛЬНО КОСМИЧЕСКОГО ИНСТРУМЕНТАРИЯ СДЕРЖИВАНИЯ ВОЙНЫ В КАРАБАХЕ Г.КОТАНДЖЯН

В Национальном исследовательском университете обороны Армении была разработана методология привлечения Сопредседателей Минской группы ОБСЕ к зондажу опасной динамики силы в зоне Карабахского конфликта с использованием средств наблюдения из наднационального околоземного пространства с применением орбитальных средств дистанционного зондажа.

Автор считает что международное космическое право дает такую возможность осуществлять контроль и подобный способ является надежным инновационным инструментом политико-дипломатического сдерживания посредством консультации и переговоров.

NEW PROPOSITIONS TO MINSK GROUP AND UN ON SPACE INSTRUMENTS OF CONTAINING WAR IN KARABAKH H.KOTANJAN

The National Defense Research University of Armenia developed a methodology of engaging the OSCE Minsk Group Co-Chair states in the initiative of remote sensing of any dangerous dynamics of force in the Karabakh Conflict zone through the sighting aid from the supernational outer space via orbital facilities.

The author considers that the International Space Law enables to control via the innovative power tool of political-diplomatic containment through consultations and negotiations.

ՀՀ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում մշակվել է Ղարաբաղյան հակամարտության գոտում ուժերի փոփոխման վտանգավոր դինամիկայի խորագննման մեջ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներին ներգրավելու մեթոդաբանություն, որը կկիրառվի վերազգային տիեզերական տարածությունից հեռավար ուղեծրային հեռադիտարկման միջոցների գործադրմամբ:

Հեղինակի համոզմամբ Տիեզերքի ուսումնասիրման հարցերում պետությունների գործունեությունը կարգավորող հոչակագիրը հնարավորություն է տալիս վերահսկում իրականացնել այս եղանակով, որը վստահելի նորամուծական մեթոդ է հանդիսանում խորհրդարկումների ու բանակցությունների կիրառմամբ քաղաքական-դիվանագիտական զսպման համար:

Նախ, թույլ տվեք իմ երախտագիտությունը հայտնել Երևանում ԱՄՆ-ի դեսպանատանը՝ այսօրվա այս միջոցառման կազմակերպման հարցում ցուցաբերած աջակցության և գործադրած ջանքերի համար: Ուրախությամբ պետք է նշեմ, որ օգտվելով հոչակավոր Մարշալի անվան իմ Ամա մատեր կենտրոնի գիտափորձաքննական այս ամբիոնն օգտագործելու հնարավորությունից՝ կարող եմ արևմտյան լսարանին հավասարակշռված կերպով ներկայացնել մեծ անվտանգային ներուժ ունեցող մի

գաղափար: Խոսքը վերաբերում է մեր տարածաշրջանում եղած հակամարտությունների գոտիների տիեզերական ուղեծրային խորագնման արդյունքները ՄԱԿ-ի Բաց տիեզերքի հարցերով գրասենյակին փոխանցելու գաղափարին: Նախկինում ես Մինսկի խմբի համանախագահ ռուսական կողմին ներկայացրել եմ Ղարաբաղյան հակամարտության հարցում ուղեծրային խորագնումը՝ որպես զսպման միջոց կիրառելու այս մտահղացումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Արտաքին հարցերի մշտական հանձնաժողովի և Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի Միջազգային հարցերով հանձնաժողովի համատեղ նիստում: Սույն ելույթը մեր ՊԱՀՀ-ի թիմային հետազոտական աշխատանքի արգասիք է, որը նպատակաուղղված է Մինսկի խմբի խաղաղամետ գործունեությունն զգալիորեն առաջ մղելուն: Ես կարծում եմ, որ սա պատեհ առիթ է այս կարևոր ուղեծրները Մինսկի խմբի համանախագահ ամերիկյան կողմին ներկայացնելու համար: Մշակելով դեպի Ղարաբաղյան հակամարտության կարգավորում գնալու ուղիները՝ մենք չենք կարող շրջանցել ԱՄՆ-ի և Ռուսաստանի՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երկու մշտական անդամների և Մինսկի խմբի համանախագահ երկրների հարաբերությունների խնդիրը: Մինևս ժամանակ, ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի դիրքորոշումներում բազմամյա և չընդհատվող միջազգային անվտանգային համաձայնության քաղաքական-դիվանագիտական հարթակների շարքում առանձնանում է Ղարաբաղյան խաղաղ կարգավորման գծով ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահության հարթակը: Այս չընդհատվող համաձայնությունը հաստատել է իր բացառիկ արժեքը նաև 2016 թ. մայիսին Վիեննայում կայացած բանակցություններում: Խոսելով ամերիկա-ռուսական հարաբերությունների դինամիկայի մասին՝ հարկ է նշել, որ «ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների վերագործարկման» վաղ շրջանում՝ 2010 թ., ինձ բախտ վիճակվեց Հարվարդի համալսարանի Քենեդիի անվան կառավարման դպրոցում հանդես գալու որպես «ԱՄՆ-Ռուսաստան ռազմավարական երկխոսության» գիտական խորհրդարկու, ինչը հնարավորություն տվեց մասնագիտորեն հետևելու ռուս-ամերիկյան հարաբերությունների դինամիկային: Քննարկելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում առաջընթացի ուղիների մասին, մենք պետք է հաշվի առնենք, որ ռազմական գործողությունների ցանկացած վերսկսում կարող է զազանական ցեղասպանության մի նոր ողբերգական էջ բացել Արևելքն ու Արևմուտքը կամրջող այս տարածաշրջանում, որտեղ Իսլամական պետության դահիճները այսօր ցեղասպանություն են իրագործում քրիստոնյաների, հրեաների, եզդիների և ահաբեկչական ջիհադի մեջ չներգրավված մահմեդականների նկատմամբ: Հայ ժողովրդի համար «Այլևս երբեք» կարգախոսի արդիականությունը շեշտվեց դեռ ԽՍՀՄ Վերակառուցման շրջանում, երբ Ադրբեջանը ձեռնարկեց իր հայ բնակչության ջարդերը[1]: 1991 թ. նոյեմբերի 23-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) լուծարելու մասին օրենք՝ առանց նրա բնակչության համաձայնության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիմնարար միջազգային նորմերի խախտումներով: Ի պատասխան այդ ապօրինի քայլի՝ 1991 թվականի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղն սկսեց իր անկախացման գործընթացը՝ ԽՍՀՄ ներքին օրենսդրությանը համապատասխան: Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորվեցին երկու պետություն. Ադրբեջանի ԽՍՀ տարածքում՝ Ադրբեջանի Հանրապետությունը, և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Երկու պետությունների ձևավորումն ունի նույն իրավական հիմքը, հետևաբար իր ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիման վրա Լեռնային Ղարաբաղի կազմավորումը երբևէ չպետք է դիտվի Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության տեսանկյունից: 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում միջազգային չափանիշներին ու 1991 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքին ճշգրիտ համապատասխանությամբ և միջազգային դիտորդների մասնակցությամբ անցկացվեց անկախության հարցով հանրաքվե: ԼՂՀ ադրբեջանական փոքրամասնությանը հնարավորություն տրվեց մասնակցելու հանրաքվեին, սակայն Բաքվի ցուցումով նա հրաժարվեց այդ հնարավորությունից[2]: Հետագա իրադարձությունները վերացրին հանրաքվեի արդյունքները ԽՍՀՄ կենտրոնական մարմինների հետ համաձայնեցնելու անվերապահ պահանջը, քանի որ 1991 թ. դեկտեմբերի 21-ին ստորագրվեց Խորհրդային Միության

յուծարման մասին Ալմա Աթայի հռչակագիրը[3]: Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում անցկացված Հանրաքվեն օրինական է, և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը կատարվել է համապատասխան Միջազգային իրավունքի սկզբունքներին ու հատկանիշներին: Ադրբեջանի Հանրապետությունը 1992 թ. սանձազերծել է Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմ, որը տևել է մինչև 1994 թ., երբ Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը ստորագրել էին հրադադարի համաձայնագիր, իսկ 1995 թ. էլ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում հրադադարի հաստատությանցման մասին եռակողմ պայմանագիր: Այս համաձայնագրերը հակամարտող կողմերը և Ղարաբաղյան հակամարտության գծով ԵԱՀԿ Մինսկի խումբը ճանաչել են որպես իրենց էության մեջ անժամկետ և հակամարտության գոտում երկարատև զինադադարի հաստատման համար հիմք: Միջազգային հանրությունը քանիցս վերահաստատել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման իր տեսլականը, ըստ որի՝ այն պետք է հիմնված լինի Միջազգային իրավունքի երեք հիմնական և հավասարազոր՝ «Ժողովուրդների հավասար իրավունքների և ինքնորոշման, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման և տարածքային ամբողջականության» սկզբունքների վրա: 2016 թ. ապրիլի 2-ին՝ 1994 թ. հրադադարի կնքումից 22 տարի անց, Ադրբեջանի Չինված ուժերը դարաբաղա-ադրբեջանական շփման գծի երկայնքով ձեռնարկեցին անակնկալ լայնամասշտաբ հարձակում, որի հիմնական նպատակն էր ձախողել հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու ԵԱՀԿ Մինսկի խմբի առաքելությունը, զավթել Լեռնային Ղարաբաղը և նրա հայկական բնակչությանը ենթարկել ցեղասպանության: Ադրբեջանի նման վարքագիծը զգալի չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ չկան շփման գծի մերձակայքում ռազմական գործողությունների վերսկսման դիմամիկան գրանցող մեխանիզմներ: Ադրբեջանը հետևողականորեն մերժում է տեխնիկական և մարդկային մասնագիտական ռեսուրսների միջոցով զինադադարի մշտազննում կատարելու մասին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկությունները, ինչի շնորհիվ կարող է զսպել ռազմական գործողությունների վերսկսումը: 2016 թվականի ապրիլին Ղարաբաղում Չորսօրյա պատերազմի արդյունքներով կայացած Վիեննայի խորհրդարկումների ժամանակ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դիրքորոշումների համահունչությունը Հայաստանին և Ադրբեջանին հակեց համաձայնության այն բանում, որ ռազմական գործողությունների վերսկսումից կողմերին հետ պահելու համար անհրաժեշտ է սահմանել զինված հակամարտության գոտում պատերազմի նախապատրաստման նկատմամբ վերահսկողություն: Տեխնոլոգիական նորամուծությունների և մարտական գործողությունների նախապատրաստման վրա քաղաքական-դիվանագիտական ներգործության մեթոդների խելացի համակցումը հնարավորություն է տալիս զինադադարի խախտումների հետաքննության արդյունավետ մեխանիզմի և ռազմական ուժի կուտակման ու պատերազմին նախապատրաստումն ազդարարող տարաշարժերի մշտազննումը առավել արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով քաղաքական զսպման հայեցակարգ մշակելու համար: Տվյալ համատեքստում հույժ կարևոր է հենվել այն բանի ըմբռնման վրա, որ Արցախի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև ռազմական անհավասարակշռության անման պայմաններում չի կարելի ապավինել միայն ավանդական ռազմական զսպման արդյունավետությանը: Այս հարցում անհրաժեշտ է գիտականորեն իմաստավորել միջազգային հանրության հետ համագործակցության նկատմամբ այն նորամուծական մոտեցումները, ըստ որոնց՝ լայնածավալ մարտական գործողություններին կողմերի նախապատրաստման մասին ազդարարող ռազմական ուժի վտանգավոր տարաշարժերի խորագնման համար կկիրառվեն միջազգային հանրության բարձր տեխնոլոգիական միջոցները: Խոսքը վերաբերում է Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում մեր մշակած մեթոդաբանությանը, ըստ որի՝ Ղարաբաղյան հակամարտության գոտում ուժերի փոփոխման վտանգավոր դիմամիկայի խորագնման գործում պետք է ներգրավվեն ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահները՝ վերազգային տիեզերական տարածությունից դիտողային օժանդակության միջոցով ուղեծրային հեռադիտական միջոցների գործադրմամբ: Ինչպես գիտեք, Միջազգային տիեզերական իրավունքը միջազգային հանրությանը հնարավորություն է տալիս մերձերկրային տիեզերական տարածությունից վերահսկելու

հակամարտության գոտում պատերազմական գործողությունների վերսկսմանը զորքերի պատրաստման դիմանիկան: Վերահսկողության այս եղանակը, նպատակաուղղված լինելով պատերազմի կանխմանը, կարող է միջազգային նորմերին և կանոնակարգերին համապատասխան օգտագործվել որպես խորհրդարկումների ու բանակցությունների կիրառմամբ քաղաքական-դիվանագիտական գսպման միջոց: Համաձայն Տիեզերքի ուսումնասիրման և օգտագործման հարցերում պետությունների գործունեությունը կարգավորող իրավական նորմերի հռչակագրի՝ «Միջազգային համագործակցության խրախուսման և ակտիվացման համար, հատկապես՝ զարգացող երկրների կարիքների հաշվառմամբ, տիեզերքից Երկրի հեռահար խորագնում կատարող պետությունը, ըստ խնդրանքի, խորհրդարկումներ է անցկացնում այն պետության հետ, որի տարածքը խորագնվում է»[4], իսկ Տիեզերական տարածության, ներառյալ՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ուղղությամբ պետությունների գործունեության սկզբունքների մասին պայմանագիրը նախատեսում է, որ «Տիեզերական տարածությունը, ներառյալ՝ Լուսինը և այլ երկնային մարմիններ, ենթակա չէ ազգային յուրացման ո՛չ դրանց նկատմամբ ինքնիշխանության հռչակման եղանակով, ո՛չ օգտագործման կամ զավթման ճանապարհով, ո՛չ էլ որևէ այլ միջոցով»[5]: Եթե միջնորդ խաղաղարար տերությունները գործի դնեն ուղեծրային խորագնական միջոցների կիրառմամբ պատերազմի վերսկսումը զսպելու այս նորամուծական մեթոդը, ապա դա կարող է լինել արդյունավետ եղանակ ծխացող երկարատև հակամարտությունների դեպքում և, միևնույն ժամանակ, տարածաշրջանային անվտանգության համար ռազմավարական կարևոր գործոն: 2016 թվականի մայիսին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպման շնորհիվ համաձայնություն ձեռք բերվեց հակամարտության շփման գծի ամբողջ երկայնքով հրադադարի խախտումների հետաքննության մեխանիզմների ստեղծման և ԵԱՀԿ գործող համանախագահի անձնական ներկայացուցչի խմբի հնարավորությունների ընդլայնման հարցում: Սա պատեհաժամորեն ընդունված որոշում է, որովհետև զուտ ռազմական գսպման հնարավորությունները խիստ նվազել են, քանի որ կողմերից մեկը ակտիվ կերպով գնում է հարձակողական սպառազինություն՝ խախտելով ուժերի հաշվեկշիռը: Դրա հետ մեկտեղ, 2016 թ. Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպման արդյունքները տվյալ համատեքստում պետք է դիտվեն որպես ոչ միայն հրադադարի ռեժիմը երկու հակամարտող կողմերի ազգային օդային տարածքներից վերահսկելու հարցում համաձայնություն, այլև հարձակողական սպառազինության կուտակումները և զորքերի տեղաշարժի միջոցով պատերազմին նախապատրաստումները երկու հակամարտող պետությունների ազգային ինքնիշխանությունից դուրս գտնվող տիեզերական տարածությունից վերահսկելու նպատակով ուղեծրային մեխանիզմների ընտրության համար հիմք հանդիսացող՝ ՀՀ-ի և ԱդրՀ-ի հետ հաջողված միջազգային խորհրդարկություն[6]: Այս առումով, նշանակալից դեր կարող է խաղալ ՄԱԿ-ի Բաց տիեզերքի հարցերով գրասենյակը: Նա պատասխանատու է խաղաղ նպատակներով տիեզերքի օգտագործման հարցում միջազգային համագործակցությունը խթանելու համար և ծառայում է որպես Խաղաղ նպատակներով տիեզերքի օգտագործման ՄԱԿ-ի հանձնաժողովի քարտուղարություն: Այդ հանձնաժողովը ստեղծվել է 1959 թվականին՝ ամբողջ մարդկության կողմից տիեզերքի ուսումնասիրությունը և օգտագործումը կարգավորելու նպատակով: Ներկայումս Հայաստանն ու Ադրբեջանը, ինչպես նաև Մինսկի խմբի երեք համանախագահ պետությունները այդ հանձնաժողովի անդամներ են, ինչը եզակի հնարավորություն է ստեղծում, որպեսզի հանձնաժողովի հնարավորություններն օգտագործվեն հակամարտության գոտում խաղաղություն և կայունություն ապահովելու համար[7]: Ես կարծում եմ, որ արդյունավետ կլինեք, եթե տեխնիկական գնահատում կատարելու համար ՄԱԿ-ի Բաց տիեզերքի հարցերով գրասենյակին հանձնվեին հակամարտության գոտու ուղեծրային խորագնման արդյունքները, իսկ նա շահագրգիռ կողմերին ներկայացնեք գնահատման արդյունքները: Այս մեխանիզմի հաջող ձեռնարկումը ՄԱԿ-ի Բաց տիեզերքի հարցերով գրասենյակին եզակի հնարավորություններ կընձեռեր հակամարտության գոտիների ուղեծրային խորագնման տեխնիկական գնահատում կատարելու համար: Ես լիահույս եմ, որ դրանով այս

նախադեպը կարող է դառնալ միջազգային խաղաղության և կայունության խթանման կարևոր գործիք թե՛ Ղարաբաղում, թե՛ նրա սահմաններից այն կողմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Տե՛ս՝ Закон СССР “О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР” No 1410-1 от 3 апреля 1990 г.” Ведомости Съезда народных депутатов СССР, Верховного Совета СССР”, 1990, No 15, Декларация о провозглашении Нагорно-Карабахской Республики; Jacques Derrida, Isaiah Berlin, Alain Finkielkraut, Richard Rorty, and Adrian Lyttelton. An Open Letter on Anti-Armenian Pogroms in the Soviet Union. Joint Initiative of the Helsinki Treaty Watchdog Committee of France and Intellectuals from the College International de Philosophie, Paris. September 27, 1990. The New York Review of Books, <http://www.nybooks.com/articles/1990/09/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/>; (USSR Law “On the procedure for regulation of issues related to the secession of a Union Republic from the USSR” No 1410-1 of 3 April 1990, “Bulletin of the Congress of People’s Deputies of the USSR, the Supreme Council of the USSR”, 1990, No 15, Declaration on the Proclamation of the Nagorno-Karabakh Republic), www.nkr.am/ru/declaration/10/.

[2] Տե՛ս՝ Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики (Act on the results of the referendum of the independence of Nagorno-Karabakh Republic), www.nkr.am/ru/referendum/42/.

[3] Տե՛ս՝ Алма-Атинская Декларация? Алма-Ата? 21 декабря 1991 г. (The Declaration of Alma-Ata? 21 December? 1991)? <http://cis.minsk.bv/page.php?id=178>.

[4] Տե՛ս՝ Принципы, касающиеся дистанционного зондирования Земли из космического пространства (Principles Relating to Remote Sensing of the Earth from Outer Space), <http://www.un.org/ru/documents/decl conv/conventions/earth remote sensing.shtml>.

[5] Տե՛ս՝ Договор о принципах деятельности государств по исследованию и использованию космического пространства, включая Луну и другие небесные тела (Treaty on Principles Governing the Activities of States in the Exploration and Use of Outer Space, including the Moon and Other Celestial Bodies), <http://www.un.org/ru/documents/decl conv/conventions/outer space governing.shtml>.

[6] Տե՛ս՝ Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France <http://www.osce.org/mg/240316>, Meeting with Serzh Sargsyan and Ilham Aliyev, <http://en.kremlin.ru/events/president/news/52189>.

[7] United Nations Office for Outer Space Affairs, <http://www.unoosa.org/oosa/en/aboutus/roles-responsibilities.html>.

NEW PROPOSITIONS TO MINSK GROUP AND UN ON SPACE INSTRUMENTS OF CONTAINING WAR IN KARABAKH

H.KOTANJAN

First of all, I would like to express my gratitude towards the US Embassy in Yerevan for its support and efforts in organizing today's event. It's my pleasure to have an opportunity to use my Alma Mater estimable Marshall Center academic-expert podium for the balanced promotion at this turn to the Western audience of the idea to raise a tremendous security possibility. The case is made for transferring our region's conflict zones' orbital outer sensing results to the UN Office of the Outer Space Affairs for the technical assessment of said results. I have presented earlier the idea of using orbital sensing as a deterrence tool in Karabakh Conflict to the Minsk Group Russian Co-Chair party at the Joint Session of the Standing Committee on Foreign Relations of the National Assembly of the Republic of Armenia and the Committee on International Affairs of the State Duma of the Russian Federation.

The current presentation is an outcome of the additional research conducted by our NDRU team, targeted at the Minsk Group peace-oriented process to the tangible way ahead. Now, I believe, this is a timely occasion to convey these instrumental messages to the Minsk Group American Co-Chair party. Elaborating the ways to move forward towards the settlement of the Karabakh conflict, we cannot circumvent the issue of US – Russia relations being two UN Security Council permanent members and Co-Chairs of the OSCE Minsk Group.

Both American and Russian experts, generals and diplomats, involved in the professional evaluation of US–Russia relations in recent years, did mention the discrepancy of negotiating parties' positions in the Minsk format on Ukraine, as well as in talks on Syria. Meanwhile, the platform of the OSCE Minsk Group Co-Chairmanship on the Karabakh Conflict peaceful settlement stands out among the political-diplomatic platforms of long-lasting and unbroken international security consensus regarding the positions of the US, Russia and France. This unbroken consensus confirmed its exceptional value also in the Vienna Summit Talks of 16 May, 2016 and the 20 June, 2016 Summit in St. Petersburg. Speaking on dynamics of US – Russia relations, it's worthy to mention that at the dawn of the “US–Russia Reset” in 2010, I happened to be an academic consultant of the “US–Russia Strategic Dialogue” at Harvard Kennedy School of Government, which enabled me to professionally keep a close watch of the dynamics of US–Russia relations.

Discussing the ways forward in the Karabakh conflict settlement process, we should take into account that any resumption of hostilities entails a threat of opening a new chapter of genocidal tragedies across this region bridging the East and the West, where dismal genocide of Christians, Jews, Yazidis, and Muslims, not engaged in the terroristic jihad, has been perpetrated by the torturers of the Islamic State. The urgency of the “Never Again” principle for the Armenian people once again was called forth during the Perestroika in the USSR – at the time of pogroms committed by Azerbaijan against its Armenians population [3].

On 23 November, 1991, the Supreme Council of Azerbaijan passed a law on the dissolution of the Nagorno-Karabakh Autonomous Oblast (NKAO) without the Karabakh people's consent and with violations of the basic international norms regarding the peoples' right to self-determination. In response to those illegal actions, on 10 December, 1991, Nagorno-Karabakh initiated the process of its independence in compliance with the domestic legislation of the USSR. After the collapse of the Soviet Union, two states were formed: the Republic of Azerbaijan on the territory of the Azerbaijan SSR, and the Republic of Nagorno-Karabakh on the territory of the Nagorno-Karabakh Autonomous Oblast.

The establishment of both States has a similar legal basis, therefore, the legitimate establishment of the Nagorno-Karabakh Republic, on the basis of its peoples' right to self-determination, should never be considered within the scope of the Republic of Azerbaijan's territorial integrity. Strictly meeting international standards and the USSR Law of 3 April, 1990, a Referendum of Independence was held in Nagorno-Karabakh

attended by international observers. The Azerbaijani minority of the NKR was given an opportunity to take part in the referendum; however, on Baku's instructions they declined that opportunity [4].

Subsequent events eliminated the imperative obligation of coordinating the referendum results with the USSR central bodies, since on 21 December, 1991 the Alma-Ata Declaration on the Dissolution of the Soviet Union was signed [5]. Hence, the referendum held on the territory of Nagorno-Karabakh is legal; the establishment of the Nagorno-Karabakh Republic was carried out in conformity with the principles and attributes required by International Law. In 1992, the Azerbaijani Republic launched a war against Nagorno-Karabakh, which was waged until 1994 when Azerbaijan, Nagorno-Karabakh and Armenia signed a ceasefire agreement with no time limitation, and in 1995 – a tripartite agreement on strengthening the ceasefire in the Nagorno-Karabakh. These agreements were recognized by the conflicting parties and the OSCE Minsk Group Co-Chairs on the Nagorno-Karabakh conflict as permanent by nature and constituting the basis of a long-run truce in the conflict zone. The international community has repeatedly reaffirmed its vision of the settlement of the Karabakh Conflict, which has to be based on the three main and equal principles of the International Law: “the equal rights and self-determination of peoples, the non-use of force or threat of force, and territorial integrity”.

On 2 April, 2016, 22 years after the 1994 ceasefire agreement, the Azerbaijani Armed Forces launched a large-scale surprise attack along the Karabakh-Azerbaijani line of contact with the main goals to undermine the OSCE Minsk Group Co-Chairs mission to peacefully resolve the conflict, occupy Nagorno-Karabakh, and commit genocide against its Armenian population. This behavior of Azerbaijan is largely due to the lack of investigation mechanisms that would register the dynamics of the resumption of hostilities around the line of contact. Azerbaijan has persistently rejected the OSCE Minsk Group Co-Chairs' proposals on monitoring the ceasefire by use of technical and human professional resources that would contain the resumption of hostilities.

The convergence of positions of Russia, the US and France in Vienna consultations on the results of the April 2016 Four-Day War in Karabakh led Armenia and Azerbaijan to agree on the need of establishing control over the preparations for war in the armed conflict zone in order to prevent the parties from resuming hostilities. Enacting the smart combination of technological innovations along with the methods of political-diplomatic influence on the preparation for combat operations will pave the way for developing a concept of containment through effective investigation mechanisms for ceasefire violations and more efficient implementation of monitoring over military forces' accumulation and movement signaling war preparations. In this sense, it is essential to proceed from the understanding that under the current trend towards the escalation of the arms imbalance between Artsakh Republic on the one side, and Azerbaijan – on the other, it is unacceptable to rely purely on the traditional military deterrence seeking to prevent the resumption of hostilities. In that event, we find it vital to academically comprehend innovative approaches to cooperating with the international community aimed at utilizing its high-tech tools for the sensing of military forces' dangerous maneuvers signaling preparations for expanded military operations.

The point is the methodology we developed in the National Defense Research University of Armenia for engaging the OSCE Minsk Group Co-Chair states in the initiative of sensing any dangerous dynamics of force in the Karabakh Conflict zone through the sighting aid from the supranational outer space via orbital facilities of remote sensing. As you know, the International Space Law enables the international community to inspect from the near-Earth space the dynamics of the troops preparation for the resumption of hostilities in the conflict zones. Targeted at preventing a war, this kind of remote inspection can be used in conformity with international norms and regulations as an innovative power tool of political-diplomatic containment through consultations and negotiations. According to the Declaration of Legal Principles Governing the Activities of States in the Exploration and Use of Outer Space, “To promote and intensify international cooperation, especially with regard to the needs of developing countries, a State carrying out remote sensing of the Earth from space shall, upon request, enter into consultations with a State whose territory is sensed”, [1] and the Treaty on Principles Governing the Activities of States in the Exploration and Use of Outer Space, including the Moon and Other

Celestial Bodies states that “Outer Space, including the Moon and other celestial bodies, is not subject to national appropriation by claim of sovereignty, by means of use or occupation, or by any other means”[2].

With the proviso that mediating peacemaker powers applied this innovative method of containing war resumption via orbital facilities of remote sensing could become an effective tool in the case of protracted smoldering conflicts, and be a strategically important factor for the regional security.

The meeting between the Armenian and Azerbaijani Presidents in Vienna in May 2016 yielded an agreement on the establishment of investigation mechanisms for ceasefire violations along the conflict’s line of contact, and the expansion of the capabilities of the team of the Personal Representative of the OSCE Chairperson in Office. This was a timely decision since one of the sides has been actively buying offensive weapons, thus upsetting the military balance. Simultaneously, the results of the 2016 meetings in Vienna and St. Petersburg could be considered not only as a consensus on monitoring the ceasefire regime from the national air spaces of the two conflicting parties, but as successful consultations with the Republic of Armenia and the Republic of Azerbaijan on investigation mechanisms from the outer space targeted at revealing warlike preparations through the accumulation of offensive weapons and movement of troops. [6]. In this regard, The United Nations Office for Outer Space Affairs (UNOOSA) may play an important role. This office is responsible for promoting international cooperation in the peaceful uses of outer space, and serves as the secretariat for the United Nations Committee on the Peaceful Uses of Outer Space. [7]

The Committee was established in 1959 to govern the exploration and use of space for the benefit of all humanity. Currently Armenia and Azerbaijan, as well as all three Minsk Group Co-Chair states, are members of the Committee, which creates a unique opportunity for using the Committee’s capabilities to support peace and stability in conflict zones. To my mind, it would be useful if the United Nations Office for Outer Space Affairs received the data of conflict zones orbital sensing to further make a technical assessment and present results back to the concerned parties. The successful launch of this mechanism will create unique opportunities to use the UN Office for Outer Space Affairs for the purpose of the technical assessment of data received from conflict zones orbital sensing. I am hopeful that in this way this precedent can be transformed into a significant tool of promoting international peace and stability in Karabakh and beyond.

See Принципы, касающиеся дистанционного зондирования Земли из космического пространства (Principles Relating to Remote Sensing of the Earth from Outer Space), http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/earth_remote_sensing.shtml.

See Договор о принципах деятельности государств по исследованию и использованию космического пространства, включая Луну и другие небесные тела (Treaty on Principles Governing the Activities of States in the Exploration and Use of Outer Space, including the Moon and Other Celestial Bodies), http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/outer_space_governing.shtml.

See Закон СССР “О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР” No 1410-1 от 3 апреля 1990 г.” Ведомости Съезда народных депутатов СССР, Верховного Совета СССР”, 1990, No 15, Декларация о провозглашении Нагорно-Карабахской Республики; Jacques Derrida, Isaiah Berlin, Alain Finkelkraut, Richard Rorty, and Adrian Lyttelton. An Open Letter on Anti-Armenian Pogroms in the Soviet Union. Joint Initiative of the Helsinki Treaty Watchdog Committee of France and Intellectuals from the College International de Philosophie, Paris. September 27, 1990. The New York Review of Books, <http://www.nybooks.com/articles/1990/09/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/>; (USSR Law “On the procedure for regulation of issues related to the secession of a Union Republic from the USSR” No 1410-1 of 3 April 1990, “Bulletin of the Congress of People’s Deputies of the USSR, the Supreme Council of the USSR”, 1990, No 15, Declaration on the Proclamation of the Nagorno-Karabakh Republic), www.nkr.am/ru/declaration/10/.

See Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики (Act on the results of the referendum of the independence of Nagorno-Karabakh Republic), [nkr.am/ru/referendum/42/](http://www.nkr.am/ru/referendum/42/).

See Алма-Атинская Декларация, Алма-Ата, 21 декабря 1991 г. (The Declaration of Alma-Ata, 21 December, 1991), <http://cis.minsk.bv/page.php?id=178>. See Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France <http://www.osce.org/mg/240316>, Meeting with Serzh Sargsyan and Ilham Aliev, <http://en.kremlin.ru/events/president/news/52189>. United Nations Office for Outer Space Affairs, <http://www.unoosa.org/oosa/en/aboutus/roles-responsibilities.html>.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Հայկ Քոթանջյան - ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ, ք. գ. դ., պրոֆեսոր:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: